ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/838-2021

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-800-09.12.2020-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2020 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1423 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-800-09.12.2020-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է խստացնել պետական դավաճանության և լրտեսության հանցակազմերի համար, համապատասխանաբար, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 299-րդ և 302-րդ հոդվածներով նախատեսված սանկցիաները՝ այն հիմնավորմամբ, որ ներկայիս կարգավորումները չեն կանխարգելում պետական դավաճանության կամ լրտեսության իրականացումը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախագծի վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունի:

Միաժամանակ առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 299-րդ հոդվածի փոփոխվող սանկցիայում ամրագրել ազատազրկման նվազագույն և առավելագույն սահմանաչափերը:

25.12.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 դեկտեմբերի 2020 թվականի N 1423 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Արմեն Հովհաննիսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-800-09.12.2020-ՊԻ-011/0) քննարկելիս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-800-09.12.2020-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18 ՀՕ-528-Ն քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 299-րդ հոդվածի 1-ին մասում «տասից տասնհինգ տարի ժամկետով» բառերը փոխարինել «քսան տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկմամբ»:

Հոդված 2. Օրենսգրքի 302-րդ հոդվածում «ութից տասնհինգ տարի ժամկետով» բառերը փոխարինել «տասնհինգից քսան տարի ժամկետով»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու նախագծի վերաբերյալ

Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Պետական դավաճանությունը առանձնապես ծանր հանցագործություն է, որ վնասում է պետության սուվերենությանը, ազգային ինքնիշխանությանը, տարածքային ամբողջականությանը, անձեռնմխելիությանը եւ արտաքին անվտանգությանը: Հաշվի առնելով պետական դավաճանության եւ լրտեսության ծայրահեղ վտանգավորությունը պատերազմական գործողությունների մեջ գտնվող երկրի համար մասնավորապես ռազմական դրության պայմաններում անհրաժեշտություն է առաջանում վերանայել ներկայիս կարգավորումները եւ սահմանել խստագույն պատիժ:

2020թ սեպտեմբերի 27-ից սկսած՝ Ադրբեջանի կողմից Թուրքիայի ռազմաքաղաքական աջակցությամբ Արցախի Հանրապետության նկատմամբ սանձազերծված լայնածավալ ռազմական ագրեսիայի արդյունքում ի հայտ եկան պետական դավաճանության կամ լրտեսության դեպքեր՝ ի ցույց դնելով իրավական կարգավորումներում առկա բացերը:

Վերոնշյալ դեպքերը ցույց են տալիս, որ ներկայիս կարգավորումները չեն կանխարգելում պետական դավաճանության կամ լրտեսության իրականացումը, այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջանում որպես կանխարգելող գործոն սահմանել ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված խիստ պատժի չափը ՝ քսան տարի ազատազրկում կամ ցմահ ազատազրկում:

Պետական դավաճանության լրտեսության ձեւի եւ լրտեսության հանցագործության կազմի օբյեկտիվ կողմը համընկնում է միմյանց, միայն սուբյեկտներն են տարբեր: Ըստ այդմ, երբ այդ արարքը կատարում է ՀՀ քաղաքացին, վրա է հասնում հայրենիքի դավաճանության պատասխանատվությունը (299 հոդված), իսկ երբ նույն արարքը կատարում է արտերկրի քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, առաջանում է լրտեսության հանցագործության քրեական պատասխանատվությունը (302 հոդված): Դրանով է պայմանավորված երկու հոդվածներում միառժամանակ փոփոխությունների իրականացումը, սակայն հաշվի առնելով սուբյեկտների տարբերությունը ՝ նախատեսելով տարբեր պատժաչափեր:

Պետական դավաճանության համար որպես կանոն ամենադաժան պատիժն է սահմանվում: Պատմության մեջ կարելի է հանդիպել պետական դավաճանության ամենածանր պատժին՝ մահապատժին:

Ընդ որում, ուսումնասիրել ենք նաեւ պետական դավաճանության եւ լրտեսության համար սահմանված պատիժների միջազգային փորձը եւ ակնհայտ է դարձել, որ դրանց համար մի շարք այլ երկրներում սահմանված են առավել ծանր պատիժներ ՝ ի տարբերություն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի սահմանած պատիժների:

Առաջադիմական երկրների քրեական օրենսգրքերում պետական դավաճանության համար սահմանվում է բարձրագույն պատիժը:

Այսպես, ***Անգլիայում*** պետական դավաճանություն է համարվում պետության անվտանգության դեմ իրականացրած հանցագործությունը, որի համար սահմանվում է պատիժ՝ հինգ տարուց մինչեւ ցմահ ազատազրկում:

Իսրայելում պետական դավաճանության համար սահմանված է խստագույն պատիժ, այն գործողությունը, որը վնասում է պետության սուվերենությանը եւ անվտանգությանը պատժվում է ցմահ ազատազրկմամբ կամ սահմանվում է մահապատիժ:

Ռուսաստանի Դաշնության արտաքին ավտանգության դեմ կատարված գործողությունը եւ լրտեսությունը պատժվում է տասներկուսից քսան տարի ազատազրկմամբ 500.000 ռուբլի (3.121.317 ՀՀ դրամի) չափ տուգանքով:

Ֆրանսիայում այլ պետությունների ներկայացուցիչների հետ հարաբերությունների ստեղծումը եւ պահպանումը Ֆրանսիայի դեմ ռազմական գործողություններ կամ ագրեսիայի ակտ առաջացնելու նպատակով պատժվում է 30 տարվա ազատազրկմամբ:

Իրավական ակտի ընդունման արդյունքում ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման արդյունքում ՀՀ անվտանգությունը եւ ինքնիշխանությունը վտանգի ենթարկող մի շարք հանցագործությունների դեպքում կնախատեսվեն առավել խիստ եւ համաչափ պատիժներ ՝ ստեղծելով անհրաժեշտ նախադրյալներ նման ծանրագույն վնաս հասնցնող դեպքերը կանխելու եւ զգոնությունը բարձրացնելու համար: